




## Դ Ա Ս Տ Ի Ն Ր Ա Կ Ի Զ Կ Ի Ն Ը

Իբրև իրավարարները մեր երջանկության  
և մեր առաքինություններուն մեկ մասին,  
կիները իրենց նկարագրին և բարքերուն  
կնիքը կգրոշմեն մեն մի նոր սերունդի վրա,  
քանի որ ամեն մի սերունդ, իր առաջին  
տարիներուն, անո՛նց մի միայն կպատկա-  
նի: Ո՛վ որ խորհրդածած է մեր առաջին  
տպավորություններուն կորուլին և պինդ  
տևողության վրա, ով որ կրնա մտածել, թե  
այդ առաջին տպավորություններն ստուգիվ  
անոնք են, զորս մայր մը կհաղորդե կամ  
կտպավորե, պիտի չվարանի ընդունելու,  
թե կինը իր տկար ձեռքերուն մեջ կկրի ըն-  
կերության ճակատագիրը: Մանուկին այս  
առաջին տպավորություններն են, որ հետո  
կըլլան կատարյալ մարդուն հրայրքները և  
երբեմն սկզբունքները: Ոչ այնքան մայրի-  
կին կաթն է, որ կյուրացնե զավկին արյու-  
նը, որքան անոր գաղափարները՝ իր միտ-

քը. այդ գաղափարներուն մեջ կան նույն-  
իսկ այնպիսիներ, զորս հետո նոր դաս-  
տիարակության մը բոլոր ջանքերը չեն  
կրնար ոչ հաղթահարել և ոչ եղծել. զգա-  
լությունները և պատկերները այնքան ու-  
ժեղ կքանդակվին փափուկ հյուսվածքին  
մեջ՝ անոր ուղեղին, որ այս գործարանը որ-  
քան զորանա ինքը, նույնքան նաև կզո-  
րացնե զանոնք: Կտեսնվի ահա, թե անգե-  
ցության նախավորությունը ավելի մեծ է  
քան միտումին գերազանցությունը. այն-  
պես որ կարելի է ըսել, թե բնությունը մար-  
դը իր առաջին տարիներուն մեջ կնոջ խնա-  
մակալության տակ դնելով, անոր կուտա  
մեծագույն բաժինը՝ անհատներու և ժողո-  
վուրդներու բարոյական ճակատագիրը վա-  
րելու գործին մեջ:

Ա. Վ.

